քել զվկայական Գաբրիէլի, զի զեկեղեցին զոր հիմնարկեալ կառոյց՝ ինքն օծցէ ձեռամբ իւրով, զի հովիւ քաջ է եւ արթուն վասն ժողովրդոց Եգիպտոսի, և արժանի այնմ պատուոյ, թէեւ գտանիցի 'ի նմա մասնաւոր ինչ թերութիւն, այլ մեզ յամենայնի ընդունելի և արժանի է եւ քաջ արժանի, և զի հռչակեցաւ 'ի վիճակիս թէ Գաբրիէլ ունի ամբառնալ յաստիճան Եպիսկոպոսութեան, եւ այլ սոցին նման բանք երկար, տես 'ի նամականիս 1838—39, 1 Յունվար· և 'ի 6 Հոկտեմբեր։

Ի վերայ այսր նամակաց զիջաւ Պօղոս Եպիսկոպոս 'ի թախանձանս նոցա, մանաւանդ ակնածէր 'ի Պօղոս Պէյ· գրեաց առ նոսա պատասխանի նամակաց և ընդ նմին առաքեաց զվկայականն Գաբրիէլի, և նա եկ 'ի ճանապարհ և գնաց 'ի Սիս և ձեռնադրեցաւ յաստիճան Եպիսկոպոսութեան 'ի Տ· Միքայէլ Կաթուղիկոսէ 'ի ցեղէ Աջապահից, ('ի 15 Յունիսի, 1839) եւ դարձաւ 'ի վիճակն իւր յԵգիպտոս, և վարեաց զիշխանութիւն իւր մինչ ցվախճան կենաց իւրոց անկախ յԱթոռոյն Երուսաղէմի, կոչելով զինքն Փոխարէ։ Էառ նաեւ հրովարտակ յՕսմանեան Դրանէ միջնորդութեամբ Յակոբոս Պատրիարքի Կոստանդինուպօլսոյ, սակս անկասկած վարելոյ զիշխանութիւն իւր։ Եւ այսպիսի եղանակաւ որոշեցաւ Գաբրիէլ յիրաւասութենէ Աթոռոյն Երուսաղէմի եւ վախճանեալ թաղեցաւ 'ի մէջ եկեղեցւոյն, ուր յառաջագոյն պատրաստեալ էր զգերեզման իւր։ Եւ զկնի մահուան նորա ծագեցան վէճք մեծամեծք 'ի վերայ թէմական և կալուածական խնդրոց, զորս թողումք արձանագրել յայլում տեղւոջ և ժամանակի։

Ճեմարանն որ կառուցաւ յիւսկիւտար ծախիւք Ս· Աթոռոյն, որպէս գրեցաք կանխագոյն, կամեցան իշխանաւորք ազգին, զի Աթոռն նպաստեսցէ նաեւ օրական ծախուց նորին, ուստի խորհրդով սահմանեցին զի Փոխանորդն Երուսաղէմի անխափան վճարեսցէ յիւրաքանչիւր ամիս 10,000· եւ 'ի տարին 60,000 դահեկան՝ և վասն այսր ժողովք Ամիրայից գրեցին առ միաբանութիւնս Աթոռոյն, և 'ի մասնաւորի ճարտարապետ Յովհաննէս Ամիրայ առ Պօղոս եպիսկոպոս, տալ յարգել միաբանութեան զխորհուրդ Ամիրայից, եւ շահել զմիտս նոցա զի մի ընդդիմասցին,